# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# 26.10.2020թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «19» «11» 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Ազատյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 26.10.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ք. Երևան, Զ. Սարկավագի 157 |
| Հ/Հ՝ 900011025757 | Հ/Հ՝ 1510023294810100 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00803554 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Ս. Ազատյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | |

**Հավելված N 1**
**« 19 » « 11 » 2020թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 2*
*« 26 » « 10 » 2020թ. կնքված*
*N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/52-1» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | |
| | | | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 18211500/504 | Բաճկոն | 22 997 700 | 22 997 700 | **22 997 700** |
| 3 | 18211500/502 | Բաճկոն | 1 199 880 | 1 199 880 | **1 199 880** |
| 4 | 18211500/501 | Բաճկոն | 60 000 | 60 000 | **60 000** |
| 5 | 18421170/501 | Գոտիներ | 2 676 000 | 2 676 000 | **2 676 000** |
| 7 | 18211100/501 | Վերարկու | 79 998 | 79 998 | **79 998** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | 18211100/502 | Վերարկու | 79 998 | 79 998 | **79 998** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Ձ. Սարկավագի 157
Հ/Հ՝ 1510023294810100
ՀՎՀՀ՝ 00803554
«Արարատբանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Ս. Ազատյան
/ստորագրություն/